



# Բողոքարկման գործընթացը

## Բովանդակություն

Ե՞րբ և ինչպե՞ս կարող եմ բողոքարկել	1
Բողոքարկման քանի՞ մակարդակ գոյություն ունի	2
Արդյո՞ք իմ նպաստները կշարունակվեն	3
Արդյո՞ք կարող է որևէ մեկն ինձ օգնել	4
Կապ Հաստատել Սոցիալական Ապահովության Ծառայության հետ	4

Սոցիալական ապահովությունը ցանկանում է համոզվել, որ հաշմանդամության կամ լրացուցիչ սոցիալական եկամտի (SSI) դիմումի վերաբերյալ կայացրած յուրաքանչյուր որոշում ճշգրիտ է: Նախքան որոշում կայացնելը, մենք մանրակրկիտ ուսումնասիրում ենք ձեր գործի հետ կապված բոլոր տվյալները, որոնք կարող են ազդել ծրագրին՝ ձեր իրավասության կամ ձեր նպաստի գումարները ստանալու վրա:

Երբ մենք որոշում կայացնենք ձեր դիմումի վերաբերյալ, ձեզ կուղարկվի մեր որոշումը բացատրող նամակ: Եթե դուք համաձայն չեք մեր որոշման հետ, ապա կարող եք բողոքարկել այն, այսինքն՝ խնդրել մեզ կրկին վերանայել ձեր գործը:

Երբ բողոքարկման խնդրանք եք ներկայացնում, մենք վերանայում ենք ամբողջ որոշումը, նույնիսկ ձեր օգտին ընդունված հատվածները: Եթե մեր որոշումը սխալ է, ապա մենք կփոխենք այն:

## Ե՞րբ և ինչպե՞ս կարող եմ բողոքարկել

Եթե ձեզ մերժել են սոցիալական ապահովության նպաստներ տրամադրել առողջական կամ ոչ առողջական պատճառներով, ապա դուք կարող եք բողոքարկել: մեր որոշման մասին նամակը ստանալուց 60 օրվա ընթացքում՝ ներկայացնելով գրավոր դիմում:

Դուք կարող եք գանգահարել մեզ բողոքարկման ձևաթուղթ (Ձև SSA-561) ստանալու համար: Ձեր որոշումը բողոքարկելու ամենաարագ և դյուրին եղանակը մեր կայքէջ այցելելն է՝ [www.socialsecurity.gov/disability/appeal](http://www.socialsecurity.gov/disability/appeal): Կարող եք դիմել և առցանց ստանալ բոլոր փաստաթղթերը՝ ձեր հայցն արագացնելու համար: Դուք կարող եք բողոքարկել առցանց նույնիսկ, եթե ապրում եք ԱՄՆ սահմաններից դուրս:

## Բողոքարկման քանի՞ մակարդակ գոյություն ունի

Հիմնականում գոյություն ունեն բողոքարկման չորս մակարդակներ, որոնք են

- Կրկնակի վերանայում,
- Լսում վարչական դատարանում,
- Վերանայում Վերաքննիչ Խորհրդի կողմից, և
- Վերանայում Դաշնային դատարանի կողմից:

Երբ մենք ձեր դիմումի վերաբերյալ մեր որոշման մասին նամակ ենք ուղարկում, ապա այնտեղ ներկայացված է լինում նաև որոշումը բողոքարկելու կարգը:

## Կրկնակի վերանայում

Կրկնակի վերանայումը՝ ձեր դիմումի ամբողջական վերանայումն է որևէ անձի կողմից, ով չի մասնակցել առաջին որոշման ընդունմանը: Մենք կդիտարկենք սկզբնական որոշման ժամանակ ներկայացված բոլոր փաստարկները, գումարած որևէ նոր փաստարկ:

Կրկնակի վերանայման դեպքերի մեծամասնությունը ենթադրում է ձեր փաստաթղթերի վերանայում՝ առանց ձեր մասնակցության անհրաժեշտության: Սակայն, եթե դուք բողոքարկում եք հաշմանդամության նպաստի իրավասությունն այլևս չունենալու պատճառով, ելնելով ձեր առողջական վիճակի բարելավումից, ապա կարող եք հանդիպել սոցիալական

ապահովության ներկայացուցչին և բացատրել ինչու եք կարծում, որ դեռևս հաշմանդամություն ունեք:

## Դատական լսում

Եթե դուք համաձայն չեք կրկնակի վերանայման որոշման հետ, ապա կարող եք դատական լսում պահանջել: Լսումը կիրականացվի վարչական հարցերով դատավորի կողմից, ով որևէ մասնակցություն չի ունեցել սկզբնական որոշման ընդունմանը, ինչպես նաև կրկնակի վերանայման գործընթացին: Լսումը սովորաբար տեղի է ունենում ձեր բնակության վայրից 75 մղոն հեռավորության սահմաններում: Վարչական հարցերով դատավորը ձեզ կծանուցի լսման օրվա և վայրի մասին:

Նախքան լսումը, մենք կարող ենք ձեզանից լրացուցիչ փաստարկներ պահանջել և ճշտել ձեր դիմում պահանջի վերաբերյալ տեղեկատվությունը: Կարող եք ծանոթանալ ձեր գործով ներկայացված տեղեկատվությունը և տրամադրել նոր տեղեկություններ:

Նիստի ընթացքում վարչական հարցերով դատավորը հարցեր կուղղի ձեզ և ձեր կողմից ներկայացված բոլոր վկաներին: Նիստի ընթացքում այլ վկաները նույնպես, օրինակ՝ բժշկական կամ մասնագիտական փորձագետները, կարող են մեզ տեղեկություններ տրամադրել: Կամ ձեր ներկայացուցիչը կարող եք հարցեր ուղղել վկաներին:

Որոշ դեպքերում, մենք կարող ենք վարել լսումը տեսաձայնագրվող հեռակոնֆերանսի միջոցով, և ոչ թե ամերես: Նման դեպքում ձեզ նախապես կտեղեկացնենք լսման ժամանակի մասին: Մենք կարող ենք տեսաձայնագրվող լսումներն ավելի հարմարավետ դարձնել ձեզ համար: Հաճախ տեսաձայնագրվող լսումը կարող է ավելի արագ նշանակվել, քան ամերես հանդիպումը: Ինչպես նաև տեսաձայնագրվող լսման վայրը կարող է ավելի մոտ լինել ձեր տանը: Այդ հանգամանքը կարող է ավելի հեշտացնել որևէ վկայի կամ ներկայացուցչի ձեզ ուղեկցելը:

Սովորաբար լսմանը ներկայանալը ձեր օգտին է՝ լինի դա տեսաձայնագրությամբ, թե առերես: Դուք և ձեր ներկայացուցիչը, եթե կա այդպիսի մեկը, պետք է ներկայանաք լսմանը և բացատրեք ձեր դեպքը:

Եթե դուք ի վիճակի չեք ներկայանալու լսմանը, կամ չունեք դա անելու ցանկություն, դուք պետք է այդ մասին գրավոր տեղեկացնեք հնարավորինս շուտ: Եթե վարչական հարցերով դատավորը չգտնի, որ ձեր ներկայությունը պարտադիր է ձեր գործով որոշում կայացնելու համար և չպահանջի ձեր ներկայությունը, ապա կարող եք չներկայանալ դատին: Կամ հնարավոր է մենք փորձենք ձեզ համար ավելի հարմարավետ պայմաններ ստեղծել, այն է՝ փոխել ձեր լսման ժամը կամ վայրը: Դուք պետք է բավականաչափ լուրջ պատճառ ունենաք, որպեսզի մենք ձեզ համար կազմակերպենք նման փոփոխություններ:

Լսումից հետո, դատավորը կկայացնի իր որոշումը՝ հիմնվելով ձեր գործում առկա ողջ տեղեկատվության վրա, ներառյալ որևէ նոր տեղեկատվություն, որը դուք կտրամադրեք: Մենք ձեզ կուղարկենք նամակ և դատավորի որոշման պատճեն:

### **Վերաքննիչ Խորհուրդ**

Եթե համաձայն չեք դատական լսման որոշման հետ, ապա կարող եք խնդրել սոցիալական ապահովության Վերաքննիչ Խորհրդին վերանայել այն: Մենք ուրախ կլինենք օգնել ձեզ այդ խնդրում:

Վերաքննիչ Խորհուրդը դիտարկում է վերանայման բոլոր հայցերը, սակայն այն կարող է մերժել որևէ հայց, եթե համոզված է, որ լսման արդյունքում ճիշտ որոշում է կայացվել: Եթե Վերաքննիչ Խորհուրդը որոշի վերանայել ձեր գործը, այն կամ ինքը որոշումը կկայացնի իր հայեցողությամբ կամ կվերադարձնի գործը վարչական հարցերով դատավորին՝ հետագա վերանայման:

Եթե Վերաքննիչ Խորհուրդը մերժում է ձեր վերանայման հայցը, ապա մենք ձեզ նամակ կուղարկենք մերժման

պատճառաբանությամբ: Եթե Վերաքննիչ Խորհուրդը վերանայի ձեր գործը և իր հայեցողությամբ որոշում կայացնի, ապա մենք ձեզ կուղարկենք այդ որոշման պատճեն: Եթե Վերաքննիչ Խորհուրդը վերադարձնի ձեր գործը Վարչարարական հարցերով դատավորին, ապա մենք ձեզ կուղարկենք նամակը և հրամանի պատճեն:

### **Դաշնային դատարան**

Եթե դուք համաձայն չեք Վերաքննիչ Խորհրդի որոշման հետ, կամ եթե Վերաքննիչ Խորհուրդը որոշում է չվերանայել ձեր գործը, ապա դուք կարող եք դատական հայց ներկայացնել դաշնային շրջանային դատարան: Վերաքննիչ Խորհրդի գործողության վերաբերյալ ձեզ ուղարկված նամակում նկարագրվում է նաև, թե ինչպես կարող եք խնդրել դատարանին դիտարկել ձեր գործը:

### **Արդյո՞ք իմ նպաստները կշարունակվեն**

Որոշ դեպքերում դուք կարող եք խնդրել մեզ շարունակել ձեր նպաստների վճարումը՝ մինչդեռ մենք որոշում ենք կայացնում ձեր բողոքարկման հարցով: Կարող եք խնդրել որպեսզի ձեր նպաստների վճարումը շարունակվի, եթե՝

- դուք բողոքարկում եք մեր որոշումը, որ դուք այլևս չեք կարող ստանալ Սոցիալական Ապահովության հաշմանդամության նպաստ, քանի որ ձեր առողջական վիճակը չի կարգավորվում, կամ
- դուք բողոքարկում եք մեր որոշումը, որ դուք այլևս իրավասու չեք SSI վճարներ ստանալու համար, կամ որ ձեր SSI վճարները պետք է կրճատվեն կամ կասեցվեն:

Եթե ցանկանում եք, որպեսզի ձեր նպաստները շարունակվեն, դուք պետք է մեզ այդ մասին տեղեկացնեք մեր նամակը ստանալու պահից 10 օրվա ընթացքում: Եթե ձեր բողոքի հայցը մերժվում է, ապա

հնարավոր է ստիպված լինեք ետ վճարելու ցանկացած գումար, որը ստանալու իրավասությունը չեք ունեցել:

## Արդյո՞ք կարող է որևէ մեկն ինձ օգնել՝

Այո: Շատ մարդիկ վարում են իրենց սեփական սոցիալական ապահովության բողոքարկման հայցերը՝ սոցիալական ապահովության կողմից ստացված անվճար աջակցությամբ: Սակայն դուք կարող եք ընտրել իրավաբան, ընկեր, կամ որևէ մեկին, ով կօգնի ձեզ: Այն անձը ում դուք նշանակում եք ձեզ օգնելու համար կոչվում է «ներկայացուցիչ»: Մենք կաշխատենք ձեր ներկայացուցիչի հետ այնպես, ինչպես որ կաշխատեինք ձեզ հետ: Ձեր ներկայացուցիչը կարող է ձեր անունից հանդես գալ սոցիալական ապահովության հիմնական հարցերում և ստանալ որոշման պատճենները, որոնք մենք կայացնում ենք ձեր դիմումի վերաբերյալ:

Ձեր ներկայացուցիչը չի կարող ձեզանից որևէ վճար գանձել, առանց սոցիալական ապահովության նախնական գրավոր համաձայնությունը ստանալու:

Ներկայացուցիչ ունենալու վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն ստանալու համար ինդիքեք *Ներկայացուցչության ձեր իրավունքը տեղեկագիրը* (Հրատարակություն թիվ 05- 10075) կամ կարող եք գտնել այն մեր կայքում:

## Կապ Հաստատել Սոցիալական Ապահովության Ծառայության հետ

Կան Սոցիալական Ապահովության Ծառայության հետ կապ հաստատելու տարբեր միջոցներ, այդ թվում առցանց, հեռախոսով և անձնապես: Մենք այստեղ ենք՝ Ձեր հարցերին պատասխանելու և Ձեզ սպասարկելու նպատակով: Ավելի քան 80 տարվա ընթացքում, Սոցիալական Ապահովությունը օգնում է ապահովելու այսօրվա և վաղվա օրը՝ միլիոնավոր

մարդկանց տրամադրելով նպաստներ և ֆինանսական աջակցություն՝ իրենց կյանքի ճանապարհին:

## Այեցելե՛ք մեր կայքէջը՝

Ցանկացած վայրից և ցանկացած ժամանակ Սոցիալական Ապահովության գործնետություն վարելու ամենհարմար եղանակը դա մեր՝ **[www.socialsecurity.gov](http://www.socialsecurity.gov)** կայքէջը այցելելն է: Այնտեղ Դուք կարող եք՝

- Ստեղծել *my* Social Security account (իմ Սոցիալական Ապահովություն անձնական էջը)՝ Ձեր *Social Security Statement (Սոցիալական Ապահովության հաշվետվությունը)* դիտելու, Ձեր հասույթը հավաստելու, նպաստների հավաստագրության նամակը տպելու, Ձեր ուղղակի փոխանցման (direct deposit) վերաբերյալ տեղեկատվությունը փոխելու, Ձեր Medicare-ի քարտի փոխարինում հայցելու, SSA-1099/1042S փոխարինում ստանալու նպատակով և ավելին;
- Դիմել Extra Help (Օժանդակ օգնության) ծրագրին Medicare-ի դեղատոմսով տրամադրվող դեղորայքի ծրագրով նախատեսված ծախսերի համար/
- Դիմել կենսաթոշակի, հաշմանդամության և Medicare-ի նպաստների համար
- Գտնել մեր հրատարակությունների կրկնօրինակները
- Ստանալ պատասխաններ հաճախ տրվող հարցերին և
- Շատ ավելին

Լշված ծառայություններից որոշները հասանելի են միայն անգլերեն լեզվով: Այցելե՛ք մեր Multilanguage Gateway բաժինը (Բազմալեզու էջը)՝ Հայերեն լեզվով տեղեկատվություն ստանալու համար: Մենք տրամադրում ենք անվճար թարգմանչական ծառայություններ, որպեսզի օգնենք Ձեզ վարելու Ձեր Սոցիալական Ապահովության գործնետությունը: Տվյալ թարգմանչական ծառայությունները հասանելի են անկախ

Նրանից, թե Դուք դիմել եք մեզ հեռախոսով,  
թե այցելել եք Սոցիալական Ապահովության  
գրասենյակ:

## Հեռախոս

Եթե Դուք չունեք համացանցի (ինտերնետի)  
հասանելիություն, ապա հեռախոսի  
միջոցով մենք շատ ավտոմատացված  
ծառայություններ ենք առաջարկում՝  
օրը 24 ժամ շաբաթը 7 օր: Չանգահարեք  
մեզ մեր անվճար՝ **1-800-772-1213**  
հեռախոսահամարով կամ մեր  
TTY (հեռատիպ)՝ **1-800-325-0778**  
հեռախոսահամարով՝ լսողության հետ  
խնդիրներ ունենալու դեպքում:

Եթե Դուք աշխատակցի հետ խոսելու կարիք  
ունեք, ապա մենք կարող ենք պատասխանել  
Ձեր զանգերին՝ Երկուշաբթիից Ուրբաթ  
ժամը առավոտյան 07:00-ից մինչև  
երեկոյան 19:00-ը: Մենք խնդրում ենք Ձեր  
համբերատարությունը ծանրաբեռնված  
շրջաններում, քանի որ Դուք կարող եք  
ունենալ սովորականից ավելի հաճախ  
ստացվող ծանրաբեռնվածության ազդանշան  
և ավելի երկար սպասելաժամանակ մեզ  
հետ խոսելու համար: Մենք ակնկալում ենք  
սպասարկել Ձեզ:



Securing today  
and tomorrow